ԻՆՉՊԵՍ ԼՐԱՑՆԵԼ ՁԵՐ SAR 7-Ը ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ/ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Դրամական Օգնության և CalFresh (Սննդի Դրամանիշեր) Նպաստների Համար

Պահպանեք այս ձևը ձեզ օգնելու համար լրացնելու ձեր SAR 7-ը (Կիսամյակային Իրավասության/Կարգավիճակի Հաշվետվությունը): Եթե օգնության կարիք ունեք լրացնելու ձեր հաշվետվությունը, **զանգահարեք մարզին:**

- Եթե դուք չուղարկեք ամբողջությամբ լրացված հաշվետվությունը, ձեր նպաստները կարող են ուշանալ, փոփոխվել կամ դադարել, կամ առաջացնել հավելավճար, որը դուք պետք է ետ վճարեք: Դուք պետք է պատասխանեք բոլոր հարցերը,և կցեք ապացույց, երբ այն ձեզանից պահանջվի:
- **Անհրաժեշտության դեպքում կցեք առանձին թուղթ:**
- **Ըստ ձեր հայտնած փաստերի հնարավոր է, որ ձեր նպաստները ավելանան, նվազեն կամ դադարեն:**

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Ի՞նչ հաճախականությամբ պետք է լրացնեք SAR 7

Տարին մեկ անգամ (ձեր դիմումնագրից/տարեկան վերահաստատումից 6 ամիս հետո): Մարզը ձեզ կտեղեկացնի երբ է ձեր SAR 7-ի ժամկետը:

Ձեր տանն ապրող անձանց հաշվետվություն

Եթե ձեր ընտանիքը ստանում է *դրամական օգնություն,*պետք է ներկայացնի փաստեր՝

- Բոլոր **երեխաների** համար-սեփական, որդեգրած և խորթ:
- Բոլոր **ծնողների** համար - սեփական, որդեգրած և խորթ:
- Երեխայի գործի մեջ գտնվող այլ **օժանդակություն ստացող ազգականների** համար:
- **Ձեր** և ձեր **կնոջ/ամուսնու** կամ **գրանցված կողակից ընկերոջ** համար:
- Ցանկացած այլ անձի համար, ով **ժամանակավորապես բացակայում է** տնից:

Եթե ձեր ընտանիքը ստանում է *CalFresh* (առանց կամ դրամական օգնության հետ մեկտեղ) դուք պետք է նաև փաստեր ներկայացնեք.

- Բոլոր երեխաները:
- Բոլոր ազգական չափահասները:
- Ընտանիքում ապրող բոլոր այլ անդամները, որոնք սովորաբար գնում և պատրաստում են ուտելիք ձեզ հետ:

Նպաստների դադարեցման խնդրանք

- Եթե ցանկանում եք ձեր որևէ նպաստը դադարի SAR 7-ի վրա լրացրեք այն բաժինը, որտեղ գրված է դադարեցնել նպաստները **միայն**: SAR 7-ի վրա նշեք այն նպաստները որ ցանկանում եք դադարեցնել, և ստորագրեք ու ամսաթիվը գրեք: Եթե ցանկանում եք դադարեցնել միայն որոշ *նպաստներ և պահպանել մնացածը, ապա պետք է լրացնեք SAR 7-ի մնացած մասը:*
- Դուք ձեր նպաստների կարող եք դադարեցնել նաև ցանգահարելով մարզին:
- Եթե ձեր դրամական օգնությունը դադարեցնեք, ապա ձեր Medi-Cal-ը նույնպես կարող է դադարել կամ փոփոխվել: Դուք իրավասու չեք լինի Medi-Cal-ի կամ հնարավոր է վճարեք բաժնեվարձ:

ԻՆՉՊԵՍ ԼՐԱՑՆԵԼ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՐՑ

Ընտանիքի տեղեկատվություն (Հարց 1)

Նշեք որևէ փոփոխություններ, որ կատարվել է ձեզ հետ ապրող անձանց հետ, հասցեի փոփոխություններ (ներառյալ բնակարանի համարի փոփոխություն) և նախորդ անգամ ներկայացրածից տարբեր բնակարանի ծախսերի փոփոխություններ: Սա ներառում է՝ նորածիններ, մարդիկ, որոնք ժամանակավորապես բացակայում են ձեր տանից, որևէ անձ, որ մահացել է, ընդունվել կամ դուրս է գրվել հիվանդանոցից կամ հաստատությունից (ներառյալ բանտարկություն կամ ազատազրկում), և այլն:

Հասցեի փոփոխություն/Բնակարանային Ծախսեր (2-րդ և 3-րդ հարցեր)

Ներկայացրեք մեզ փոփոխությունների փաստեր ձեր հասցեի կամ հեռախոսահամարի հետ կապված, որ անցյալում ներկայացրել էիք: Եթե դուք ստանում եք CalFresh, ձեզանից կպահանջվի ներկայացնել ապացույցներ ձեր նոր բնակարանային ծախսերի մասին, ինչպես օրինակ՝ բնակվարձ և կոմունալ ծախսեր: Եթե ձեր ծախսերի ավելացել են տեղափոխության պատճառով, ապա անպայման գրեք նոր գումարները: Սա կարող է բարձրացնել ձեր CalFresh նպաստները:

Դատապարտումների, Փախուստի և Վաղաժամկետ Ազատ Արձակման/Փորձաշրջանի խախտումներ (4-րդ հարց)

Այս հարցը վերաբերվում է արդեն իսկ ձեզ հետ ապրող որևէ անձին, ում հետ կատարվել է սրանցից որևէ մեկը, վերջին անգամ հայտնելուց հետո: Սա ՆՈՒՅՆՊԵՍ որևիցե մեկի համար է, ով տեղափոխվել է ձեր տուն, ունի թմրանյութերի հետ կապված դատապարտություն, փախչում է օրենքից կամ խախտել է վաղաժամկետ ազատ արձակումը/ փորձաշրջանը: Մեզ հարկավոր է անձի անունը, ձերբակալության/ դատապարտման վայրը և ամսաթիվը: Անցյալում եթե այս տեղեկությունը հայտնել եք մարզին, ապա կարիք չունեք նույն տեղեկությունը կրկին հայտնելու:

Ծախսեր(CalFresh-ի տեղեկություն) (5-րդ, 6-րդ և 7-րդ հարցեր)

Այս հարցերը կարող են փոխել ձեր CalFresh նպաստները: Այս տեղեկությունը կարող է նվազեցնել մեր հաշվարկած եկամուտը և ավելացնել ձեր նպաստները: 60 տարեկան և բարձր տարիք ունեցող անհատները, ովքեր անաշխատունակ են, նշեք որևէ փոփոխություններ բժշկական ծախսերի հետ, որոնց համար դուք ինքներդ եք վճարում: Որևէ CalFresh ստացող ընտանիքի համար, ներկայացրեք փոփոխությունները, որոնք կատարվել են երեխայի կամ չափահաս կախյալի խնամքի հետ, որն անհրաժեշտ է աշխատանքի կամ ուսուցման համար: Եթե վճարում եք երեխայի օժանդակություն, ներկայացրեք վճարված գումարի որևէ փոփոխություն: **Ավելի շատ նպաստներ ստանալու համար կցեք ապացույց** :

Մեփականություն(8-րդ հարց)

Նշեք բոլոր նրանց, ովքեր ստացել, գնել, վաճառել, փոխանակել, ծախսել կամ տվել են որևէ սե փականություն: Սեփականությունը ներառում է՝ հողամաս, տուն, ավտոմեքենաներ, բանկի հաշիվներ, դրամական վճարումներ (վիճակախաղի կամ կազինոյի շահումներ, հետին թվով վճարված սոցիալական ապահովության և հարկերի վերադարձ) և այլն: Ներառյալ նվերներ և վարկեր: Նշեք թե ում սեփականությունն է, ինչպիսի սեփականություն է, երբ է այն փոխվել և սեփականության արժեքը ("արժեքը" ձևի վրա է): Նշեք վանդակը թե ինչ պատահեց: **Կցեք ապացույց:**

Եթե դուք արդեն հայտնել և ներկայացրել եք նոր սեփականության ապացույցը, ապա դուք կարիք չունեք նորից այն հայտնելու քանի դեռ փոփոխություն չի կատարվել:

Աշխատանքային եկամուտ (9-րդ հարց)

Նշեք աշխատանքային **ողջ** եկամուտը (աշխատանք) – վաստակած, թեյավճարներից, ուսուցումից, օրաբաժիններից, նպաստներից, կամ այլ աշխատավարձերից, ովքեր ստացել են հաշվետու ամսին: Նշեք քանակը մինչև հարկերը կամ պահումները (համախառն գումարը): Կցեք ապացույց:

- **Աշխատանքային եկամուտը** ներառում սակայն չի սահմանափակվում աշխատավարձերով, կանխիկ եկամտով, արձակուրդային վճարումով, պարգևատրումով, ինքնաձեռնարկատիրության դրամով, ժամանակավոր աշխատանքային կամ ուսուցումի եկամտով, վարձակալության եկամտով, IHSS և այլն:
- Եթե **ինքնաձեռնարկատեր եք,** դուք կարող եք ստանալ 40% ծախսերի նվազեցում առանց ապացույց ներկայացնելու: Եթե ձեր ծախսերը ավելի շատ են և դուք ցանկանում եք հայցել փաստացի ծախսեր, ապա նշեք բոլոր աշխատանքային ծախսերը առանձին թղթի վրա: Կցեք ապացույց, եթե օգտագործում եք փաստացի ծախսեր:

Մենք պետք է իմանանք, եթե կարծում եք, թե եկամուտը կշարունակվի կամ գիտեք, որ այն կփոխվի: Եթե ձեր եկամուտը անփոփոխ կմնա, ապա մենք կօգտագործենք այն գումարը, որ դուք ներկայացնեք որպես ձեր եկամուտ առաջիկա 6 ամիսների ընթացքում: Եթե գիտեք, որ ձեր եկամուտը կփոփոխվի, ասացեք մեզ թե ինչու, որքան և երբ կկատարվի փոփոխությունը: Եթե համոզված չեք, դուք նույնպես կարող եք փոփոխության մասին հայտնել երբ այն կատարվի: Օրինակ՝ եթե ձեզ աշխատանք են առաջարկել և դուք արդեն գիտեք ձեր ժամական վճարը ու աշխատանքային ժամերը, ապա դուք պետք է հայտնեք այս մասին նույնիսկ եթե դեռ չեք սկսել աշխատել կամ վճարվել: Նույնպես, եթե դուք ժամանակ առ ժամանակ եք աշխատում կամ աշխատանքային ժամերը փոփոխվում են, ապա պետք է գրեք այս տեղեկությունը ձեր SAR 7 ձևի վրա:

Եկամուտի ապացույցը ներառում սակայն չի սահմանափակվում՝ աշխատավարձերով, չեկերի պատճեներով, կամ գործատիրոջ հարցադրումով, և այլն կամ ինքնաձեռնարկատիրության հարկերի հաշվետվությունով:

Ուրիշ եկամուտ(10-րդ հարց)

Նշեք **բոլոր** այն եկամուտները ցանկացած այլ աղբյուրներից: **Կցեք ապացույց:**

- **Անաշխատունակության կամ Կենսաթոշակի եկամուտներն են՝** SSI, Սոցիալական Ապահովություն, Վետերանների անաշխատունակություն/կենսաթոշակի վճարումներ, աշխատողի փոխհատուցում կամ ցանկացած այլ անաշխատունակության/կենսաթոշակի վճարումներ:
- **Գործազրկության նպաստներ**
- **Ուրիշ.** Վիճակախաղի շահումներ, ապահովագրության կամ իրավական կարգավորումներ, նվերներ կամ վարկեր, վարձակալական օժանդա- կություն, անվճար բնակավայր/ կոմունալ/ հագուստեղեն/սնունդ (կամ ինչ որ մեկը ձեր փոխարեն վճարել է բոլոր այս ծախսերը), կամ այլն:

Նշեք (1) թե ով է ստացել եկամուտը, (2) որտեղից են ստացել դրամը, և (3) ստացած գումարի քանակը: Ասացեք մեզ եթե եկամուտը շարունակվելու է կամ եթե գիտեք թե այն փոփոխվելու է: Եթե գիտեք թե այն փոփոխվելու է, ապա ասացեք մեզ թե երբ և որքան է փոփոխությունը:

Եկամուտի այլ ապացույցներե ներառում են բայց չեն սահմանափակվում՝ աշխատավարձի կտրոններ, չեկերի պատճեներ, շնորհման նամակներ այս հաստատությունից որտեղից ստացել եք դրամ, և այլն:

Որևէ այլ փոփոխություններ (11-րդ հարց)

Նշեք այն մնացածը, որը կարող է փոխել ձեր իրավասությունը կամ ձեր նպաստների քանակը: Փոփոխությունների <u>օրինակները</u> ներկայացված են SAR7-ի վրա:

Ո՞Վ ՊԵՏՔ Է ՍՏՈՐԱԳՐԻ SAR 7-Ը:

- **Դրամական Օգնության համար.** Դուք և ձեր օժանդակություն ստացող կինը/ամուսինը, գրանցված ընտանեկան գործընկերը, և օժանդակություն ստացող երեխայի(ների) մյուս ծնողը,ապրում են ձեր տանը:
- **CalFresh-ի համար.** Ընտանիքի ղեկավարը, լիազոր ներկայացուցիչը, կամ ընտանիքի պատասխանատու անդամը:
- **Եվ երկուսի համար.** Մյուս անձը, որ օգնում է լրացնելու հաշվետվությունը, թարգմանիչը կամ ձեր նշան դնելու ընթացքում ներկա գտնվող վկան:

Ի՞ՆՉ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆՔ ԵՐԲ ԱՍՈՒՄ ԵՆՔ

ԱԿՏԻՎՈՐԵՆ ՓՈՐՁՈՒՄ ԵՆՔ ԿԻՐԱՌԵԼ ՀԱՆՑԱՆՔԻ ԵՐԱՇԽԻՔԸ.
Անհատի համար դուրս է գրվել հանցագործության երաշխիք, և իրավապահ մարմինները փորձում են կատարել ձերբակալությունը: Նահանգից/մարզից դուրս, նշանակում է, որ նրանք փորձում են ձեզ վերադարձնել կամ ետ բերել մեկ այլ նահանգ/մարզ:

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ. CalWORKs (Կալիֆորնիայում Աշխատանքի Հնարավորություն և Պատասխանատվություն Երեխաների Համար), Գաղթականների Դրամական Օժանդակություն (RCA), T rafficking and Crime Assistance Program (TCVAP), and Emergency Cash Assistance (ECA).

ԵՐԵԽԱՅԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ. Վճարումը դուք պետք է կատարեք անհատին ձեր երեխայի կամ խորթ երեխայի համար: Ներառյալ վճարումները պետք է կատարվեն ձեր տանը ապրող խորթ ծնողի կողմից:

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ SAR 7. SAR-ը "ամբողջական է" միայն, երբ՝

- Բոլոր ԱՅՈ/ՈՉ հարցերը պատասխանված են, *և*
- Բոլոր տեղեկությունները լրացված են, *և*
- Բոլոր ապացույցները կցված են, երբ ձևը պահանջում է, *և*
- Բոլոր պահանջվող ստորագրությունները ձևի վրա դրված են, *և*
- Ձևը ստորագրված է և ամսաթիվը գրված է հաշվետու ամսվա վերջին օրից հետո:

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ. Ցանկացած թմրանյութեր, որ սահմանափակվել են դաշնային կամ նահանգային օրենքի կողմից, ներառվում են բայց չեն սահմանափակվում՝ թմրադեղերով, ոգելից խմիչքներով, դեպրեսանտներով, հալյուցինացիաններով և մարիխուանայով:

ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ.
Թմրանյութերի հետ կապված քրեական հանցագործություն նշանակում է ձերբակալում տիրապետելու, օգտագործելու, արտադրելու, վերահսկվող նյութ(եր) տարածելու համար:

ՓԱԽՈՒՍՏ.
"Փախչել" նշանակում է օրինապահ մարմինները ակտիվորեն ձգտում են գտնել անհատին կիրառելու հանցագործության երաշխիքը:

ՀԱՄԱԽՍԱՌՆ ԳՈՒՄԱՐ. Ձեր աշխատավարձի կամ այլ չեկերի գումարի քանակը (Անաշխատունակության նպաստ, կենսաթոշակ և այլն), մինչև հարկերից հանած պահումները, սոցիալական ապահովություն, և այլն:

ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԿԱՄ ՎԱՂԱԺԱՄ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ԽԱԽՏՈՒՄ. Դատարանը գտել է, որ դուք խախտել եք ձեր փորձաշրջանի կամ վաղաժամկետ ազատ արձակման պայմանը: Բնօրինակ հանցագործությունը, որի համար փորձաշրջանը կամ վաղաժամկետ ազատ արձակումը կարգադրվել է հանցանքի կամ զանցանքի համար է:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՄԻՍ. SAR 7-ի վերը նշված ամիս: Ներկայացրեք ձեր ստացած բոլոր եկամուտները և որևէ փոփոխություններ, որ կատարվել են այս ամսում:

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՄԻՍ. Այն ամիսը, որ դուք ստորագրում և գրում եք հաշվետվության ամիսը և վերադարձնում եք: Ներկայացրած ամիսը նշված է SAR 7-ի վերևի մասում, "Իրավասության Կարգավիճակի Հաշվետվություն" վերնագրի տակ:

ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ

- Դուք պետք է ստորագրեք SAR 7-ը "սուտ վկայության համար պատժի ներքո": Սա նշանակում է, որ դուք երդվել եք (խոստացել եք), որ ձեր ներկայացրած փաստերը ճշմարիտ են, ստույգ և լիարժեք:
- Սուտ վկայություն տալը հանագործություն է – դա նշանակում է, որ դուք երդվել (խոստացել) էիք ճիշտը ասել, բայց դուք անազնիվ գտնվեցիք:

ՀԻՇԵՔ.

- Հաշվետվության ժամկետը ներկայացված ամսի 5-րդ օրն է: Փորձեք ներկայացնել այն ժամանակին, խուսափելու համար նպաստների հետ կապված խնդիրներ ունենալուց:
- Եթե ձեր հաշվերվությունը ուշացել է (ներկայացված ամսի 11-ից հետո), աղբոշջական չէ կամ վերադարձված չէ, ձեր նպաստները հնարավոր է ուշանան, փոփոխվեն կամ դադարեն:
- Եթե մարզը ձեր հաշվետվությունը այդ ամսին շատ ուշ ստանա, որ չկարողանա նվազեցնել ձեր նպաստները հիմնվելով ձեր տեղեկության վրա, ապա դա կհաշվարկվի ձեզ վրա որպես գերավճար և դուք այն կվերադարձնեք:
- Եթե ձեր հաշվետվությունը ամբողջական չէ երբ այն ներկայացրել եք, ապա դուք պետք է լրացնեք այն հարցերը, որոնք չեք պատասխանել և/կամ չեք ներկայացրել փաստերերբ ձեզանից պահանջվել է: Ձեր նպաստները հնարավոր է ուշանան:
- Եթե դուք ստորագրեք և գրեք ամսաթիվը մինչև ներկայացրած ամսի առաջին օրը, ձեզանից կպահանջվի նորից ստորագրել և ամսաթիվը դնել:
- Եթե դուք համոզված չեք թե ինչպես ներկայացնել, ինչ ներկայացնել, կամ ինչպիսի ապացույց ուղարկել, ապա **հարցրեք մարզին:**
- Եթե ձեր դրամական օժանդակությունը դադարի, դուք կարող է դեռ իրավասու լինեք ստանալու CalFresh նպաստներ նույնիսկ եթե դուք այժմ աշխատում եք:
- Եթե ձեր դրամական օժանդակությունը դադարի, դուք կարող է դեռ իրավասու լինեք ստանալու անվճար կամ ցածր վճարով առողջության ապահովագրություն Medi-Cal-ի ներքո:

ՎԵԼՖԵՐԻ ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ.

- Վելքերի խարդախությունն այն է, երբ դուք դիտավորյալ չեք ներկայացնում տեղեկությունը, կամ սխալ տեղեկություն եք հայտնում, ավելի շատ նպաստներ ստանալու նպատակով:
- Խարդախությունը հանցագործություն է:

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎԵԼՖԵՐԻ ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ.
Եթե դուք դատապարտվել եք հանցագործության համար կամ եթե դուք իրավազրկվել եք դիտավորյալ (միտումնավոր) ճշտորեն չներկայացնելու համար ձեր իրավասության տեղեկությունը, ապա դուք հնարավոր է զրկվեք ձեր դրամական օգնության մասը: Թե որքան ժամանակով կզրկվեք հիմնված է թե ինչ է հանցանքը և թե նախկինում խարդախություն կատարել եք թե ոչ: Դուք նույնպես հնարավոր է վճարեք տույժ մինչև $10,000 և/կամ կբանտարկվեք կամ կազատազրկվեք մինչև 3 տարի:

Ձեր դրամական օգնությունը կարող է դադարել.

- Բոլոր փաստերը չներկայացնելու կամ սխալ փաստեր տալու համար՝ առաջին անգամ 6 ամիս, երկրորդ անգամ 12 ամիս, կամ երրորդ անգամ ընդմիշտ:
- Նպաստներ ստանալու նպաստակով, տարվեր գործերի մեջ, նույն ժամանակաբնթացքում, միևնույն ընտանիքի անդամ- ների համար, մեկից ավելի դիմումնագրեր ներկայացնելու համար՝ առաջին դատապարտման անգամ 2 տարի, երկրորդ անգամ՝ 4 տարի, և երրորդ անգամ **ընդմիշտ:**
- Վելֆերի խարդախության հանցագործության դեպքում դատապարտումը հետևյալն է. 2 տարի մինչև $2,000 ավելորդ նպաստներ ստանու դեպքում, 5 տարի $2,000 մինչև $4,000 ստանալու դեպքում, և **ընդմիշտ** $5,000 կամ ավելի ստանու դեպքում:
- **Ընդմիշտ.** Մարզին ներկայացնելու համար բնակության սուտ փաստեր նպաստներ ստանալու նպատակով երկու կամ ավելի մարզերում կամ նահամզներում միևնույն ժամանակ, դիտավորյալ (միտումնավոր) մարզին սխալ փաստեր տալու անիրավասու կամ գոյություն չունեցող երեխայի համար, ստանալ ավելի քան $10,000 կանխիկ նպաստներ խարդախության միջոցով, երրորդ անգամ խարդախության համար դատապարտվել դատարանի կամ վարչական ունկնդրության կողմից:

CalFresh-ի ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ.
Եթե դուք դատապարտվել եք խարդախության համար կամ եթե դուք իրավազրկվել եք դիտավորյալ (միտումնավոր) ճշտորեն չներկայացնելու համար ձեր իրավասության տեղեկությունը, ապա ձեր CalFresh-ը կարող է դադարել 12 ամիս առաջին խախտման համար, 24 ամիս երկրորդ համար, և ընդմիշտ երրորդ անգամ: Դուք կարող է տույժ վճարեք մինչև $250,000 և/կամ 20 տարի բանտարկվեք կամ ազատազրկվեք:

Ձեր CalFresh կարող է դադարել, եթե դուք մեղավոր ճանաչվեք որևէ դատարանում օրենքի կամ վարչական ունկնդրության կողմից, որովհետև.

- Դուք փոխանակել կամ վաճառել եք CalFresh նպաստները հրազենի, զինամթերքի, կամ պայթուցիկ նյութերի հետ: Ձեր CalFresh նպաստները կարող են ընդմիշտ դադարել առաջին խախտման համար:
- Դուք փոխանակել կամ վաճառել եք CalFresh նպաստները վերահսկվող նյութերի հետ: Ձեր CalFresh նպաստները կարող են դադարել 24 ամիս առաջին խախտման համար և **ընդմիշտ** երկրորդի համար:
- Դուք փոխանակել կամ վաճառել եք $5000 կամ ավելի արժեքով CalFresh նպաստներ: Ձեր CalFresh նպաստները կարող եք **ընդմիշտ** դադարել:
- Դուք մարզին տվել եք սուտ ինքնության կամ բնակության տեղեկություն, փորձելու համար ստանալ CalFresh նպաստներ մեկից ավել գործի մեջ միևնույն ժամանակ: Ձեր CalFresh նպաստները կարող են դադարել 10 տարի:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՍ ԷՋԻ ՀԱՋՈՐԴ ԿՈՂՄԸ